

Ա.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Պատճէն

Գէորգ ծանուցեալ յԻսուսի Քրիստոսի Եւ ընտրեալ նկամօքն Աստուծոյ եպիսկոպոսաց եւ կաթուղիկոս Ամենայն Հայոց, ծայրագոյն պատրիարք համայ զգուկն նախնեաց մերոց Աթոռոյ Առաքելական մայր եկեղեցւոյն սրբոյ կաթուղիկէ էջմիածնի.

Ս. *ուսաքելական Սուրբ և ուղղափառ Եկեղեցի Հայաստանեայց անբնեալի խորհրդովք վերնային նախախնամութեան դարուց ի դարս ընդ դժնդակ կրիւք նեղութեան և վշտաց անկեալ և հարուածեալ ի կողմանց կողմանց, այդուիսկ կրթեաց զիւրսն, զպաշտօնեայս ասեմ ս. Եկեղեցւոյս և զհաւատացեալս ի նա, յառաքինութիւն քրիստոնէական*

երկայնմտութեան և օրինաւոր պաշտպանութեան և անխոցելի հաւատարմութեամբ առ Նա։

Յայս սկզբունս անշեղիս հաւատացեալ և Մեք, անհնարին ցաւօք համակիւրք, զամբ ի ձեռն կոնդակիս յայտ առնել հարազատիցդ Մերոց որդւոց զցաւս, որ հասին Մեզ ի վերջնում աւուրս։ Զի ընթեռնումք յօրագիրս, եթէ անակնկալ իմն տնօրէնութիւնք Յանձնակատար Խորհրդոյ Կովկասեան շրջանի, դան հանել ի ձեռաց Հայրապետի Ամենայն Հայոց և ի ձեռաց Հայ եկեղեցական իշխանութեանց և Հոգաբարձութեանց եկեղեցեաց զամենայն կարուածս վանորէից մերոց և եկեղեցեաց, որով և կապտիմք յիրաւանց հասոյթից ազգային ընդհանուր ակադեմիանութեանց մերոց և ստացութեանց, որք են յանուն Մեծի Աթոռոյս։

Ո՛չ ամենևին անդէպ համարեմք ի յուշ ածել սիրելեացդ Մերոց և հոգևոր զաւակաց, գնութիւնքն իրաւանց եկեղեցեաց մերոց ընդհանրապէս ի վերայ անկապուտ սեփականութեան և մատակարարութեան կարուածոց և գոյից և հասոյթից, զորս ստացեալ ունի Նա ի սկզբանէ անտի ի բարեպաշտ նուիրատուութենէ և յընծայաբերութենէ իւրոց իշխանաւոր և ժողովրդական հաւատացելոց և զորս պահեալ և պաշտպանեալ է յառաջին իսկ դարուց անտի և այսր, ոչ միայն ընդ իշխանութեամբ հարազատից իւրոց հարստութեան արքայական և իշխանական, այլ և ի ներքոյ հալածանաց և տառապանաց օտարածեռն իշխանութեանց երկրի մերոյ, մատակարարեալ զարդիւնսն բաս օրինաց Եկեղեցւոյս, արդիւնաւորեալ բաս մոց նուիրատուաց՝ ի պայծառութիւն հոգևոր և կրթական հաստատութեանց իւրոց։ Իրաւունքդ այդ անկապտելի ձևակերպեալ հաստատեցաւ ի գոյութիւն և ի պաշտպանութիւն ամենայն իրաւանց և իշխանութեան մատակարարութեան սուրբ Եկեղեցւոյս Մերոյ ի 1836 ամի, ի կարգաւորեալ օրինադրութիւն, որ վասն Հայաստանեայցս Եկեղեցեաց և կառավարութեան նորա և ի նմին իսկ ի յոդուածի 1116-դի (ԺԱ. հ. Ա. մ.) բացայայտ բանիւ

գրոշմեալ, եթէ «Եկեղեցիք Լուսաւորչական Հայոց ունին իրաւունս տիրելոյ անշարժ կալից» և ի յօդուածն 1141, կ. 3., եթէ Միւնհոդոսին է Ս. Էջմիածնի «վերատեսչութիւն կարգաց կառավարութեան գոյից Լուսաւորչական եկեղեցեաց Հայոց»։ Արդ իրաւունք սեփականութեան և մատակարարութեան հնից և նկատից հաստատեալք երբեմն, իրաւունք են ստացեալ ի դարուց ի դարս ենթարկեալք յամենայն իշխանութեանց, որք եկին անցին ընդ աշխարհս մեր։ Եւ գժուարին լինի Մեզ հաւատալ, եթէ յեղակարծ կարգադրութիւն ինչ վերս ի վայր յեղյեղացի հիմնական օրէնք և կարգ տիրապետութեան Ս. Եկեղեցւոյս և այն ի ժամանակի, յորում կամքս, ի ժամանակի, երբ ամենայն հաստատութիւն և հաստատած ազգային ունի կազմակերպել ինքնուրոյն օրինադրութեամբ, ազատակամ, ինքնիշխան և ի ձեռն ազգային կազմակերպութեանց իւրոց։

Նա զի իրաւունքս այսորիկ այնու ևս առաւել զտանին զօրացեալ և անյեղլի հաստատեալ, զի ոչ տեղական ինչ են կայքդ և գոյք, և ոչ մասնաւոր ինչ են սեպհականութիւն և մատակարարութեան իրաւունք նոցին և պատկանեալ միայն Հայոց, որ ի սահմանս շրջանին Եւրոպայ և կամ ի սահմանս համայն Ռուսիոյ, այլ են նուիրական սուրբութիւնք և անկապուտ սեպհականութիւնք ամենայն Հայոց, որ ի սփիւռս աշխարհի և համարձակօրէն իսկ մարթ է հաստատել, եթէ առաւելագոյնք են ի նոսա մասնակցութիւնք Հայոց բնակելոց ի Պարսս, ի Հնդիկս, ի գաւառս գաւառս Տաճկական Հայաստանի և ամենայն Հայոց, որք ի ծագս աշխարհի։ Այլ չկամիմք իսկ յերկարել ի բացատրութիւնս, քանզի օրէնք հիմնականք իսկ գան ի պաշտպանութիւն իրաւանց վանօրէից և եկեղեցեաց Մերոց, քանզի ի յօդուածի 1213 բացայայտ բանիւ խոստմանի և ընդունի, եթէ «Ամենայն շարժական և անշարժ ստացուած, սահմանեալ ի պահպանութիւն որ և իցէ Լուսաւորչական Հայ մենաստանի կամ եկեղեցւոյ կամ նոցին իսկ վերաբերեալ Աստուածոհաճոյ հաստատութեանց՝ համարի ընդ-

հանուր ատացուած ոգջոյն Լուսաւորչական Եկեղեցւոյն Հայոց։

Եւ չկարէր իսկ այդմ այլապէս ինչ լինել, ցորչափ Մ. Աթոռս համարի և է կեսրոն բոլմանդակ Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ, ցորչափ Գլուխ Ամենայն Եկեղեցեաց Հայոց և ընտրական Քահանայապետութիւն առ բոլմանդակ Հայ ժողովուրդն կայ կապեալ, առ որ յոգեալ են ամենայն անդամք նորա, իբր միոյ և եթ մարմնոյ և իբր անանջատ մասունք միայնոյ Հայ Եկեղեցւոյ։ Ուստի և հարկ էր պայմանով ինկատի առեալ խորամիտ լինել, եթէ չէր հնար լոկ անգամն կերպարանաւ վարել ընդ կայս և ընդ գոյս, ընդ կարուածս Հայ Եկեղեցւոյ և ընդ հատորքս նորա և կարգաւորել անպհանութիւն նորա և զմտաւոր կարարութիւն նոցա ազիկամբ։

Առաւել ևս ծանրանայ յաչս Մեր ոնարէնութիւնդ այդ, բանդի ըստ նուիրական կարգաց, որ հին Եկեղեցւոյս Մերոյ, հաւք և եկամուտ անփոխանութեանցդ այդոցիկ ի կրթութիւն և ի դաստիարակութիւն մանկանց Ս. Եկեղեցւոյս գնան. յորոց աղբիւր մշտական կան կապեալք գպրոցք Մեր ի տորին ծիսականաց ցԴպրանոցս և ցՀնմարան Մեր Հոգևոր, ընդ հոսանեալ որոյ կրթեցան և կրթին մանկունք Մեր՝ եթէ ի գաւառաց Կովկասեան շրջանի, եթէ ի հեռաւոր վայրից Եւրոպիոյ, Ասիոյ և Ամերիկայի, առանց խորութեան իւիր ի հատիցդ են մատակարարութիւնք այլ և այլ հատատութեանց կրթականի և լուսաւորութեան Ազգիս, պահպանութիւն Տպարանի Մայր Աթոռոյս, Թանգարանի և ձեռագրի Մատենադարանի նորին, յոր որպէսզի՞ առ ձրագ լուսաւոր ոչ տակաւ են, որ զան յուսամատութիւն ի գիտոց։ Ի ձեռն ապրեցեալ են, որ պահպանի եկեղեցականութիւն Ս. Եկեղեցւոյս ի Գլխոյ նորին ցյեսին սպասաւոր, և եթէ խղեցին ապրիւրքն, ապաքէն և զմահ հատատութեան հատատոցս ունիմք տեսանել ի մօտոյ։

Զոյս ամենայն յունկն որդւոցդ Մերոց խօսեցեալ՝ զաւիր և զՀեզ կոչել ի պաշտպանութիւն մեծի. իրա-

ւանց Ս. Եկեղեցւոյս։ Եթէ ասկաւին Տէր շնորհեսցէ Մեզ կեանս, ունիմք բարձրացուցանել գրաբար բողբանաց Մերոց ցորչափ ունիմքս կաս, որպէս ոչ ամենեին դանդաղեցեալ բողոք բառնալ ի ձեռն հետապրական կոչման, այլ արարեալ անդամոց Կոմիտասեան Յանձնակատարք իշխանութեան հանել խապտս գայդ խնդիր յոբակարգէ խորհրդակցութեան իւրոյ, ցգումարումն Սահմանադիր Ժողովոյ, որում և ունիմք առնել առաջի գնացեալ Մեր ի պաշտպանութիւն իրաւանց ս. Եկեղեցւոյս, որ և իրաւունք համայն ժողովրդեան և ազգի Իմոյ։ Այլ զի գրասացէ աշխարհ բոմանդակ, եթէ կապտումն իրաւանցդ կապտումն համայնից ժողովրդեան Իմոյ իրաւանց գիտեմք, զՔեզ ևս յորդորեմք բառնալ զձայն բողոքանաց առ որս անկ է և կալ պաշտպան իրաւանց, արտօնութեանց և անկապտուս սեփականութեան համայնից, որ ի գմնդակ ժամանակս իսկ 1903 և 1904 թուականաց ոչինչ ամենեին զանգրասցեալ ժողովրդեան Իմոյ զծանրութենէ հարածանաց, սատապանաց և վշտից, ենկն ենկայ որպէս մի մարմին և մի կանգուած ամբողջական ողջոյն ժողովուրդ Հայոց՝ և ի դին իսկ արեան որդւոց իւրոց յետս կոչեալ զատացուած իւր սեփականս։

Եւ արդ, եթէ ի ժամանակս բռնութեան և հարածանաց ազգն Հայոց ոչ ամենեին դանդաղեալ ծառանալ ընդդէմ բռնութեան ի պաշտպանութիւն իրաւանց իւրոց, մինչ յաւուրս ազատութեան, ինքնորիշ կազմութեան, շնչանիցէ՞ մէն մի անհատ ժողովրդեան Իմոյ զէմ դնել անիրաւ որոշման և ասել ի ձայն բարձր, եթէ «Մի՞ որ համարձակեսցի բառնալ զսեփականութիւն մեր, որ ժառանգեցաք և ի պահպանութիւն որոյ ունիմք դնել զկեանս մեր իսկս։

Ուրախ եմք ի սիրտս և ի հոգի, զի իրաւունք սեփականութեան մերոյ դրացեաց, զՎրաց ասեմք և զմահմետականաց, կան և ՀԱՆ անշարժ, որպէս և անկն իսկ էր և իրաւական։

Ուրախ եմք նոյն զի ապահովական ազգ Եկեղեցաւ ի

գրացիս մեր, առ Վիրս, որոց գիմագրաւեալ քաջարար պաշտպանեցին զազգային անպհականութիւն իւրեանց եւ բէկեան, որպէս հանրական գոյից իրաւունք. ուչ նուազ քան զնոսա ցուցին արժանիս հարեան մահմետական ժողովուրդ, որ իբրև սկզբունք անյեղլի եւ, մի ամենեին կոխել զահմանս կարուածոց կրօնական համայնից սեփականութեան եւ մի սեփականել և թիզ մի հողոյ ի կայից նոցա, զի այդ ամենայն արբուքիւն համարեցաւ յաչս նորա, զի Տեառն իւրոյ նուիրական են կարուածքս։ Արդ մինթէ Հայն առաւել նուազ ունի ցուցանել ոգի ազգասիրական և զէր կրօնական, քան զգրացիս իւր. մինթէ ոգի նորա ունի խոնարհիլ ընդ լծով անիրաւացի որոշման։ Ոչ։ գիտեմք և հաւատամք, եթէ զոյի յազգի Իսաւ նոյն ոգի ազգասիրութեան և զգայման առ սրբութիւն հանրական սեփականութեան իւրոյ։

Եւ զիարդ կարեմք իսկ համոզուիլ տարապայման վիճակի իսպառ կապման իրաւանց ժողովրդեան Իմոյ՝ յոյր ձեռն իսկ վարի կառավարութիւն կարուածոց, հասից, եկամտից և մասակարարութեան նոցա ի սկզբանէ ժամանակաց ցայսոր, և և՛ առաւել յօրէ յայնմանէ, երբ հրատարակեցան կոնդակք երջանկայիշատակ Նախորդաց Մերոց՝ Տ. Մկրտիչ Ա. Կաթուղիկոսի, ի 1906 ամի, ի 10 մայիսի և Տ. Մատթէոս Բ. Կաթուղիկոսի ի 1909 ամի, որպէս և ի Մէնջ իսկ յ7 ապրիլի 1917 ամի, № 678, յոր գնամն ժողովուրդ Մեր կոչեմք գալ ի մասնակցութիւն կառավարութեան ամենայն հասից և ունել մասն ի մասակարարութեան այնոցիկ, ի ձեռն թեմական Խորհրդոց, ընդ Առաջնորդաց իւրեանց։

Կապու�ն իրաւանցս՝ կապուումն արտօնութեանց մէն մի անհատի ազգիս խոստմանեմք Մեք, ապա և համայն լրութեան ժողովրդեանս Ուստի և մէն մի պաշտօնեայ, իւրաքանչիւր անհատ ժողովրդեան Իմոյ ուչ ամենեին դատարկացի առանձինն իմն ուժգնութեամբ խոսել և կալ պաշտպան արդար իրաւանց մերոց։

Եւ արդ յուսացեալ յօդնութիւն անձնիւր անհատի և

անդամոյ Ս. Եկեղեցւոյս և լրութեան համայն ազգութեանս, եթէ ասա ի սահմանս Կովկասու, եթէ ի Ռուսիոյ, եթէ յԱրտասահման, ուրանոր անուն Հայութեան հնչի, կամք գօրացեալ ի հաւատս կենդանի, եթէ ձայն բողոքանոց նոցա ունի դալ հասանել Մեզ ի թիկունս, որպէս Պաշտպանի աւանդից և իրաւանց ազգութեանս, նոյնպէս և ունի բարձրանալ յարդար բողոք ի պաշտպանութիւն արդարն իրաւանց, զի մի ընդ լծով ծառայութեան գայցէ Մայրս Մեր Ս. Եկեղեցի, զի մի ի խաւարի խորխորատիցն հաստատութիւնք Մեր լուսաւորութեան, կրթութեան և դաստիարակութեանս։

Մաղթեմք արտագին կար և գօրութիւն ամենեցունցդ յայս գործ մեծ և ազօթեմք հասանել ի գլուխ պաշտպանութեան իրաւանց եկեղեցոյ առ Մեզ ի նախնեաց մերոց և ապ ակնդեան մերոյ, որ գկնի մեր։

Ողջ լերուք գօրացեալ ի Գլուխն հաւատոյ Մերոյ և օրհնեալք ի Մէնջ։ Ամէն։

ԳԷՈՐԳ Է.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 10-ն Յունուարի 1918 ամի
Ըստ Տոմարիս ՌՑԿԷ
Ի Հայրապետութեան Մերոյ Է. ամի
յԱրարատեան Մ. Աթոռ Ս. Էջմիածնի
Ի Վաղարշապատ
Թ. 44.

Թարգմանութիւն

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՇԱՓԱՆԵԼԻ ԿԱՄՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

Մեր սիրելի որդիներին եւ մեր լուսոյ Մայր Ս. Էջմիածնի հարազատ զաւակներին, ամէն դասակարգի այր եւ կանանց, որոնք ցանկալի են քահանայրում, տաճարներում

եւ գիրքերում Մեր Հայրապետական ողջոյնն ենք շնորհում Միածնաէջ ս. Տաճարիցս, Մեր ս. Հօր բազմաշարաշար Գրիգոր Լուսաւորչի օրհնութեան հետ։

Հայ Առաքելական և Ս. Եկեղեցին վերին Նախախնամութեան անքննելի խորհրդով դարերի ընթացքում նեղութիւնների և վշտերի դառնութեան տակ ընկնելով և ամէն կողմից հարուածներ կրելով, դրսից իսկ կրթից և ամբացրեց իւրայիններին, այն է մեր ս. Եկեղեցու պաշտօնեաներին և նորա հետ հաւատով կապուած հաւատակիցներին՝ քրիստոնէական երկայնմտութեան առաքինութեամբ, օրէնքի սահմաններում որոշած պաշտպանութեան հաւատով և դէպի Ինքն ունեցած անխզելի հաւատարմութեամբ գինելով նոցա։

Այդ հաստատուն սիրդուներին հաւատարիմ Մենք ևս, դառն վշտով համակուած, մեր սոյն Կոնդակի միջոցով յայտնում ենք Մեր հաբտատ որդիներին այն վշտի մասին, որ վերջին ժամանակներս կրեցինք։ Օրագրների մէջ կարդացինք և տեղեկացանք, որ Կոմիտասեան շրջանի Ցանձնակատար Խորհուրդը, իւր յատուկ մի կարգադրութեամբ մտադիր է Հայոց Հայրապետի, ինչպէս և Հայ Եկեղեցական իշխանութեան և մեր Եկեղեցիների Հոգաբարձութիւնների ձեռքից հանել մեր բոլոր վանքերի և եկեղեցիների բոլոր կալուածները, որով և մեր ազգային ընդհանուր սեփականութեան հատոյթների իրաւունքից պիտի զրկուենք, ինչպէս և այն բոլոր ստացուածների եկամուտներից, որ Մեծ Աթոռս անուանիլ են տրուած։

Ամենևին անտեղի և աւելորդ չենք համարում յիշեցնել Ձեզ, Մեր սիրելի հոգևոր զաւակներդ, ընդհանրապէս մեր Եկեղեցիների նուիրագործուած իրաւունքների մասին, ինչպէս և այն անկապտելի անփոփոխութիւնը կազմող կալուածների, գոյքի և նոցանից ստացած հատոյթների մասակցութեան մասին, որ նա ստացել է անյիշատակ ժամանակներից սկսած, թէ բարեպաշտ նուիրատուութիւններից և թէ իւր իշխանների ու հաւատացող ժողովրդի

ընծայարերությիւններից, և որ պահել–պահպանել է մեր քրիստոնէութեան առաջին իսկ դարերից սկսած մինչև այսօր, ոչ միայն Իւր հարազատ զաւակների արքայական և իշխանական հարստութիւնների ժամանակ, այլ նոյն իսկ և օտարացեղ իշխանութիւնների դառն հարածանքների և տառապանքների օրերին, մատակարարելով նոցա արդիւնքները մեր Եկեղեցու օրէնքների և կարգերի համաձայն, արդիւնաշատ դարձնելով այդ հատոյցները նուիրատուների ցանկութեան համաձայն և գործադրելով Իւր հոգևոր և կրթական հատատութիւնների պայծառութեան վերայ։ Այդ իրաւունքն անկասելի ձևակերպութիւն և հաստատութիւն ստացաւ, մեր ս. Եկեղեցու բոլոր իրաւունքների և մատակարարութեան իշխանութեան գոյութեան և պաշտպանութեան համար 1836 թուականին իսկ, այն օրինադրուած կարգաւորութեամբ, որ կազմուեցաւ Հայ Եկեղեցու կառավարութեան համար։ Նոյն այդ օրէնքների մէջ բացորոշ խօսքերով գրուած է, թէ «Լուսաւորչական Հայ Եկեղեցիներն իրաւունք ունին անշարժ կալուածների տիրապետութեան» (յոդ. 1116, Ա. մ. ԺԱ. հատ.) և իւր միւս յոդուածի մէջ, թէ ս. Էջմիածնի Սինոդին է վերապահուում «Լուսաւորչական Հայ Եկեղեցիների գոյքերի և կալուածների կառավարութեան կարգն ու եղանակը». (կէտ 3, յոդ. 1141, Ա. մ. ԺԱ. հատ.)։ Արդ՝ այդ օրէնքների մէջ հաստատութիւն գտած Հայ Եկեղեցու սեփականութեան և նորա հատոյցների ու եկամուտների իրաւունքը, նոյն այն իրաւունքներն են, որ ստացել և ունեցել է Հայ Եկեղեցին դարերից ի վեր և նուիրագործուած են այն բոլոր իշխանութիւնների կողմից, որ եկել–անցել են մեր աշխարհի վրայից։ Եւ այժմ, Մեզ համար միանգամայն անհաւատալի է թուում, թէ մի յանկարծական կարգադրութեամբ մեր ս. Եկեղեցու հիմնական օրէնքներն ու տիրապետութեան կարգերը հիմն ի վայր պիտի լինին և այն ևս այն ժամանակ, երբ իւրաքանչիւր հաստատութիւն և ամէն մի ազգային հատուած ինքն է որոշում իւր կազմակերպութեան եղանակը՝ ինքորոշ օրինա-

գրութեամբ, ազատակամ, ինքնիշխան և իւր ազգային կազմակերպութիւններով միջոցով։

Այդ իրաւունքներն աւելի ևս անյողդողդ հիմքերի վրայ դրուած ենք համարում այն պատճառով, որ այդ կայքերն ու գոյքերը, ոչ տեղական բնաւորութիւն կրող և ոչ մասնաւոր սեփականութիւն կազմող ստացուածներ են և նոցա հատոյթի իրաւունքը ոչ միայն Կոմկականաց շրջանի և կամ համայն Ռուսաստանի սահմաններում ապրող Հայերին է պատկանում, այլ այնպիսի նուիրական սրբութիւններ են և անկապտելի սեփականութիւն, որ ամբողջ աշխարհի մէջ ապրող Հայութեան սեփականութիւնն է կազմում։ Եւ կարող ենք համարձակորէն ասել, որ Պարսկաստանում, ինչպէս և Հնդկաստանում և Տաճկական Հայաստանի այլ և այլ գաւառների մէջ, ինչպէս և աշխարհիս ամէն կողմը գտնուած Հայերի նուիրատուութիւնները աւելի մեծ մասն են կազմում նոցա մէջ։ Սակայն երկար բացատրութիւնների իսկ կարիք չկայ, քանի որ հիմնական օրէնքն իսկ մեր Եկեղեցիների և վանքերի իրաւունքների պաշտպանութեանն է գծագրգռ գալիս ինքնին, որոյհետև բացորոշ և պարզապէս ընդունում է, թէ «Իւրաքանչիւր Լուսաւորչական Հայ մենաստանի և կամ Եկեղեցու և կամ նոցա վերաբերող ատաւածատուն հատատութիւնների պահպանութեան համար սահմանուած ամէն մի շարժական և անշարժ կարուածք և ստացուածք՝ ամբողջ Լուսաւորչական Հայ Եկեղեցու ստացուածն է համարուում». (յոդ. 1213. Ա. մ. ԺԱ. հատ.)։

Եւ ուրիշ կերպ իսկ լինել չէր կարող, որչափ Մայր Աթոռս համարում է, և է Հայ Առաքելական ս. Եկեղեցու կենտրոն, որչափ բոլոր Հայ Եկեղեցիների Գլուխը և ընտրական Ֆանանտյապետութիւնը կապուած է համայն Հայ ժողովրդի հետ, որի հետ է կապուած ու զգուած նորա իւրաքանչիւր անդամը, իբրև միևնոյն մարմնի անբաժան անդամ, իբրև անանջատ մասեր միևնոյն Հայ Եկեղեցու Ուստի և անհրաժեշտ էր այս պայմաններն ի նկատի առնելով խորապէս ըմբռնել՝ որ հնարաւոր չէր տեղական

պայմաններով վարուել Հայ Եկեղեցու կայքերի ու գոյքերի, կալուածների ու նորա հատոյքների հետ և բաց քմաց կարգադրել նորա գարաւոր անփականութեան և մատակարարութեան խնդիրը։

Մեր աչքում առաւել ժամանակշիռ հանգամանք է, ստանում այդ կարգադրութիւնը, քանի որ մեր նուիրական կարգերի համաձայն, որ մեր ս. Եկեղեցու հիմքն է կազմում, այդ սեփականութիւնների հատոյքն ու եկամուտները մեր ս. Եկեղեցու գաւակների կրթութեան և դաստիարակութեան գործին է գնում. այդ մշտական ապրիւրի հետ են կապուած մեր դպրոցների կեանքն ու գոյութիւնը, սկսած ստորին ժխական դպրոցներից մինչև մեր Դպրանոցներն ու Հոգևոր Ճեմարանը, որի հոմանաւորութեան տակ կրթուել և կրթւում են մեր գաւակները, թէ Կովկասի շրջանից, թէ Ասիայի, թէ Եւրոպայի, Եգիպտոսի և Ամերիկայի հեռաւոր կողմերից, առանց որևէ խտրութեան։ Այդ հատոյքներով են մատակարարուում գոնում մեր կրթական և ազգային յուսաւորութեան հաստատութիւնները, պահպանում Մայր Աթոռս Ծպարանը, նորա Փանդարանը և ճոխագոյն Մատենադարանը, գէպի որն, իբրև յուսատու ճրագ՝ բազմաթիւ գիտնականներ ամէն կողմից դիմում են իրենց գիտական ուսումնասիրութիւնների համար։ Այդ ապրիւրներով է, որ պահպանուում է մեր ս. Եկեղեցու պաշտօնէութիւնը, սկսած նորա Գլխից մինչև յետին սպասաւորը։ Եւ եթէ այդ ապրիւրները խցուին, ապա ուրեմն և մեր Հաւատոյ հաստատութիւնների և նոցա կից հիմնարկութիւնների մահը պիտի տեսնենք շուտով։

Այս բոլորը պարզելով Մեր սիրելի որդիներիդ առաջ, կոչ ենք անում Ձեզ, որպէս զի մեր ս. Եկեղեցու դարաւոր իրաւունքների պաշտպանութեան դաշտ։ Եթէ դեռ ևս Աստուած Մեզ կեանք կը պարգևէ, Մեր բողոքի ձայնը կը բարձրացնենք Մեր կարողութեան բոլոր ոյժով, ինչպէս որ չը յապաղեցինք բողոքել Մեր հեռագրական դիմումով, յանուն Կովկասեան շրջանի Յանձնակատար իշխանութեան, ազգարարելով նորա անդամներին՝ հանել բոլորովին այդ

խնդիրն իրենց խորհրդակցութեան օրակարգից, մինչև համայն Ռուսիոյ Սահմանադիր Ժողովի գումարիլը, որին և Մեր կողմից առանձին յուշագիր կուղղուի մեր Եկեղեցու իրաւունքների պաշտպանութեան համար, իրաւունքներ, որ իմ ամբողջ ժողովրդի և իմ ազգի իրաւունքներն են համարում—Այլ որպէս զի ամբողջ աշխարհին ևս յայտնի լինի, եթէ այդ իրաւունքների խլումը Իմ ամբողջ ժողովրդի իրաւունքների կապտումն է, Ձեզ ևս յորդոր են կարդում բարձրացնել Ձեր բողոքի ձայնը և ուղղել այն տեղ և նոցա, ուր և ում պէտք է և պաշտպան կանգնել ամենքիդ սեփականութիւն կազմող անկապտելի իրաւունքների և տարածքի, որ 1903 և 1904 թուականների ծանր շրջաններում իսկ Իմ ժողովուրդը հարածանքի, տառապանքի ու վշտերի ծանրութիւններն իսկ աչքի առաջ ունենալով, ոտքի երաւ իբրև մի հզօր, ամբողջական մարմին, իբրև մի կուռ զանգուած և իւր որդիների արեան գնով իսկ յետ կորզեց իւր սեփականութիւն կազմող կալուածներն ու տարածքները։ Եւ եթէ հարածանքների ու բռնութեան օրերին Հայ ժողովուրդը չ՝զանգատեց ծառանալու բռնապետութեան դէմ իւր իրաւունքների արդար պաշտպանութեան համար, մթէ այժմ, այս ազատութեան և ինքնորոշ կազմակերպութեան ազատագրութեան օրերին իմ ժողովրդի իւրաքանչիւր անհատը չ՝պէտք է երնէ և դէմ դնէ այդ ուշ արդարացի որոշման դէմ և բարձրաձայն գոչէ.—«Ո՛չ որ չ՝համարձակուի խլել մեր սեփականութիւնը, այն սեփականութիւնը, որ մեր պապերից և նախնիներից ենք ժառանգել և որ մեր յետնորդ սերնդին պիտի յանձնենք, և որի իրաւունքների պաշտպանութեան համար պատրաստ ենք մեր կեանքն իսկ դնելու»։

Հոգով և սրտով ուրախ ենք, որ մեր հարևան ազգերի, այն է Վրացիների և մահմեդական ժողովրդի, ազգային սեփականութեան իրաւունքները կան և մնացին անշարժ և անձեռնմխելի, որպէս և պէտք է լինէր և իրաւացի իսկ է։ Ուրախ ենք աւելի ևս, որ մեր դրացի Վրացիներն ասպետական ոգով լցուած՝ քաջարար դիմա-

գրեցին և պաշտպան կանգնեցին իրենց գեղ. երեկուան ստացուածք ազգային սեփականութեան. նոցանից ոչ պակաս արժանիք ցոյց տուեց մեր հարեան մահմեդական ժողովուրդը, որ իբրև անշեղ սկզբունք ընդունեց՝ ամենեին ոտք չդնել իւր կրօնական համայնական սեփականութեան մէջ և մի թիզ հող իսկ չգրաւել նորա կալուածներից, որովհետև այդ բոլորը նորա աչքում արդութիւն է համարուած, որովհետև այդ կալուածները իւր Աստուծուն են նուիրաբերուած։ Արդ մի՞թէ Իմ ժողովուրդը, Հայ ազգը իւր դրացիներից պակաս ապիտական ոգի և կրօնական սէր պիտի ցոյց տայ. մի՞թէ նորա հոգին պէտք է խոնարհի այդ ոչ արդարացի որոշման լծի տակ։ Ո՛չ. գիտեմ և հաւատացած եմք, որ նոյն ապիտական առաքինութեան ոգին և հանրական սեփականութեան արդութեան զգացումներն վառ են և նորա մէջ։

Եւ ինչպէս կարող եմք հանդուրժել և տանել Մենք՝ Իմ ժողովրդի այդ իրաւունքների կատարեալ կապման այսպիսի տարապայման վիճակը, այն ժողովրդի, որի ձեռքով իսկ կատարւում է այդ կալուածների հաստատների և եկամուտների մատակարարութեան գործը դարերից ի վեր մինչև այսօր, և առաւել ևս այն ժամանակից, երբ հրատարակուեցաւ Մեր երջանկայիշատակ նախորդների՝ Տ. Մկրտիչ Ա. Կաթողիկոսի 1906 թ. մայիսի 10-ի, Տ. Մատթէոս Բ. Կաթողիկոսի 1909 թ., ինչպէս և Մեր 1917 թ. ապրիլ 7, № 678 կոնդակները, որով կոչ ենք անում Մեր համայն ժողովրդին դալ, մասնակցութիւն ունենալ կալուածական բոլոր հաստատների և նորա մատակարարութեան գործին, իրենց Առաջնորդների և Թեմական Խորհուրդների գործակցութեամբ։

Մեր այս իրաւունքների կապումը՝ Ազգիս իւրաքանչիւր անհատի իրաւունքների կապերն ենք ճանաչում Մենք, հետևաբար և Իմ ամբողջ Ազգի հանրական իրաւունքի խախտումն ենք տեսնում դորա մէջ։ Ուստի և Իմ ժողովրդի իւրաքանչիւր պաշտօնեայ, իւրաքանչիւր անհատ պարտաւոր է իւր արդար իրաւունքների պաշտպանութեան

համար ասպարէզ գալ և իւր արդար բողոքի ձայնը բարձրացնել ուժգնօրէն։

Արդ՝ յոյս ունելով Մեր ս. եկեղեցու իւրաքանչիւր անդամի և ամէն մի անհատի օգնութեան վերայ, որ և ամբողջ Ազգիս լրութիւնն է կազմում, թէ այստեղ՝ Կովկասի սահմաններում, թէ Ռուսաստանում, և թէ Արտասահմանում, ամէն մի վայրում, ուր Հայութեան անունն ու խօսքն է հնչում, և զօրացած իսկ այդ կենդանի հաւատով, թէ նոցա բողոքի ձայնը պիտի գայ հասնէ Մեզ, որպէս համայն ազգութեան աւանդների և իրաւունքների պաշտպանի, այլ և նոցա կողմից ևս անհատաբար արդար բողոք կը բարձրանայ արդարացի իրաւունքների պաշտպանութեան համար, որպէս զի մեր Մայր ս. եկեղեցին ծառայութեան ձանր լծիտակ չընկնի, որպէս զի մեր լուսաւորութեան, կրթական և դաստիարակչական հաստատութիւնները խաւարի մէջ չը խարխափեն։

Մաղթում ենք ի բոլոր սրտէ կարողութիւն և զօրութիւն ամենքիդ՝ այս մեծ գործի համար և աղօթում ենք Աստծուն, զօրավիգ լինել Ձեզ, որպէս զի մեր նախնիքներից մեզ հասած և մեր յետնորդ սերնդին յանձնելու իրաւունքների պաշտպանութիւնը գլուխ հանել կարողանաք։

Ողջ լինիք, զօրացած Մեր հաւատի Գլուխ՝ Տէր Յիսուսով և օրհնուած Մեր կողմից։ Ամէն։

Իսկականի վերայ ստորագրած է

ԳԷՈՐԳ Ե.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1918 յունուարի 10
Ըստ Մեր Տոմար ՌՅԿԷ
ի Հայրապետութեան Մերում Է. տ.
Արարատեան Մայր Աթոռ
Ս. Էջմիածին
Վաղարշապատ
Թ. 44